

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

24.04.2014

Հարգելի հայրենակիցներ,

99 տարի առաջ Օսմանյան Թուրքիայի տարածքով մեկ գործողության մեջ դրվեց պատմության մեջ չլսված մի ոճրագործություն, որն իր ամբողջ բովանդակությամբ բացահայտ բնաջնջում ու ցեղասպանություն էր հայ ազգի հանդեպ: Մարդիկ տեղահանվում կամ սպանվում էին, անկախ տարիքից ու սեռից, միայն հայ լինելու համար:

Տարիներ տևած ցեղասպանության արդյունքում մենք կորցրինք մեր պատմական հայրենիքը, մեկուկես միլիոն տարագրված հայեր իրենց շիրիմները գտան գաղթի ճանապարհներին կամ արաբական անապատներում: Իսկ եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր հայ ընտանիքներ սփռվեցին աշխարհով մեկ՝ գոյացնելով հայկական բազմաքանակ Սփյուռքը:

Անցած մեկ դարի ընթացքում Թուրքիան ոչ միայն չի ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը, ոչնչով չի հատուցել գործած ոճիրների դիմաց, այլ նաև այսօր լրջորեն խոչընդոտում է Արցախի անկախության միջազգային ճանաչմանը, տնտեսական շրջափակման միջոցով փորձում Հայաստանի Հանրապետության հետ խոսել ուժի դիրքերից:

Եվ քանի դեռ մեզ վերադարձված չէ մեր պատմական հայրենիքը, քանի դեռ ցեղասպանություն իրագործած երկիրը ներողություն չի խնդրել հայ ժողովրդից, չի փոխհատուցել նրան պատճառած մարդկային, նյութական ու հոգևոր կորուստները, մենք պետք է մշտապես և ազգովի ոգեկոչենք Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակը, խմբվենք հայրենի պետության և հավատի շուրջ, ապրենք ու պայքարենք համահայկական իդեերի իրականացման համար, որպեսզի մեր պատմության մեջ նոր ցեղասպանություններ չկրկնվեն:

Խաղաղություն Հայոց Մեծ Եղեռնի բոլոր անմեղ զոհերի հոգիներին: